

ՀԱՆԳԻՍՏ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՆՇԱՆՅԱՆԻ
(1887—1992)

1992 թ. դեկտեմբերին, Երևանում, 106 տարեկան հասակում, վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Պողոս վարդապետ Տեր-Նշանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1887 թվականին Կիլիկիայի Զորք-Մարզպան (Դյորտ-Յոլ) գյուղաքաղաքում: Մեծ Եղեռնին նահատակվում է հայրը՝ Տեր Նշան քահանան: 1922 թվականին Կիլիկիայից Սիրիա անցնելուց հետո, աշխարհիկ անունով Գարեգին Նշանի Կզըլգյոզյանը, մտասևեռում է ունեցել գնալ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք՝ կուսակրոն քահանայության ուխտով կյանքն իր ժողովրդին նվիրաբերելու նպատակով: Նահատակ Տեր Նշան քահանայի որդին դաստիարակվել էր Հայ Եկեղեցու ծառայության ոգով, և 1926 թ. նա գնաց Երուսաղեմ՝ միաբանության շարքերն անցնելու բարի մտադրությամբ:

Պատերազմից հետո, 1947-ին, նա ներգաղթեց Մայր Հայրենիք: Նա այստեղ զբաղվեց հոգևոր ծառայությամբ Երևանի զանազան եկեղեցիներում: 1955 թ. նոյեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ լուսարարապետ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռամբ, ապա 1957 թ.՝ կուսակրոն քահանա: Նա ծառայել է Մայր տաճարում որպես լուսարարի օգնական, ապա նաև Ս. Գեղարդա վանքում, ուր իր ծնողների հիշատակին կառուցել է տվել աղբյուր-հուշարձան:

1962 թ. նշանակվել է Դարալագյազի Ս. Խաչ վանքի վանահայր, իսկ հետագայում, 1967—1972 թթ., Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերի վանահայր: Տ. Պողոս վարդապետն ուր որ ծառայել է, միշտ հանդիսացել է Մայր Աթոռի նվիրյալ միաբան՝ իր եկեղեցանվեր գործունեությամբ, համեստ բնավորությամբ, ամենայն մաքրությամբ և ծառայողական նվիրումով: Առաջացած տարիքի բերումով 1972 թ. ապրիլ ամսին նա անցել է կենսաթոշակի և բնակվել Երևանում, իր հարազատների մոտ:

Նրա ծննդյան 100-ամյակի առթիվ Մայր Աթոռի պաշտոնաթերթում տպագրված 1987 թ. շնորհավորական գրության մեջ գրված է հետևյալը.

«Պողոս վարդապետ Տեր-Նշանյանը արդեն մեկ դարի ծանրություն ունի ուսերին, բայց շարունակում է ծեսեր կատարել և ներկա լինել Մայր Աթոռում կատարվող հանդիսություններին:

Այդ հարյուր տարիները լեցուն են ճակատագրի վերիվայրումներով՝ տեղահանություն հայրենի բնօրրանից, գաղթի ճանապարհին մահվան սարսափ, ապա Մայր Հայրենիքում, Սուրբ Գեղարդում և այլուր հոգևոր ծառայություն և այսօր՝ երջանիկ ծերություն»:

Հանգուցյալ վարդապետի թաղման կարգը կատարվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ապա նրա աճյունը ամփոփվեց Էջմիածնի միաբանական հին գերեզմանատանը:

Հարգանք նրա պայծառ հիշատակին: